

ԳՐԱՔԱՐԻ ԲԱՅԱԿԱՆ ԿԵՐՊԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋՈՐ

Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կերպի բերականական կարգը, ինչպես իրավացիորեն նշում է Կուրիլովիչը, ունիվերսալ կատեգորիա է, այսպես թե այնպես այն գոյություն ունի աշխարհի բոլոր լեզուներում¹։

Լեզվաբանության մեջ, սակայն, կերպի միասնական ըմբռնում գոյություն չունի։ Այս հարցի առթիվ առաջ են քաշվել երբեմն իրարամերժ, հաճախ էլ իրար լրացնող բաղմամբիվ տեսակետներ։ Դա պայմանավորված է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներով, որովհետև կերպ հասկացությունը մի լեզվում կամ լեզուների մի խմբում ունի իր արտահայտության ուրույն ձևը ու բնորոշ իմաստային երանգը, իսկ մի այլ խմբում այն բոլորովին այլ է։

Սուբյեկտիվ պատճառն այն է, որ ուսումնասիրողներից շատերը հենվում են մի լեզվի կամ կառուցվածքով նման մի քանի լեզուների փաստական նյութի վրա։ Այս դեպքում արված եզրահանգումները կարող են տարածվել միայն այդ լեզվախմբի վրա և չեն ընդգրկի ուրիշ լեզվի կամ լեզվախմբի կերպային առանձնահատկությունները։

Կերպի տարածված ըմբռնումներից մեկը կատարյալության և անկատարության հակադրությունն է (совершенство—несовершенство), որը ավելի բնորոշ է սլավոնական լեզուներին։ Սա ուսերենի բերականության մեջ ընդունված ВЯՂ-ն է, որը միջազգային տերմինաբանությամբ կոչվում է aspect։

Հարկ է նշել, որ ուսերենի կերպը չի համապատասխանում ոչ սլավոնական լեզուների, այդ թվում և գրաբարի կերպին։ Վերջիններում անկատարություն-կատարյալություն հակադրությունը կապվում է ներկայի և անցյալ կատարյալի հետ, իսկ ուսերենում թե՛ ներկա, թե՛ անցյալ ժամանակի հիմքերից կազմված ձևերում կարող է հանդես գալ նշված կերպը, որի ձևաբանական արտահայտիչները հիմնականում որոշ նախամասնիկներ ու վերջնամասնիկներ են։

Կերպային այս առանձնահատկությունը սլավոներենի նորամուծությունն է, որովհետև այն գոյություն չունի նաև հնդեվրոպական հիմք-լեզվում։

Լեզվաբաններից ոմանք կերպի բերականական կարգի մեջ տեսնում են գործողության իրականացման հետ կապվող այլ հատկանիշներ (տեականություն—ոչ տեականություն, անընդհատություն—ընդհատություն, սկսայնություն—ավարտայնություն և այլն)։

Կերպի այս հասկացության համար ընդունված տերմին գոյություն չունի. սովորաբար օգտագործում են գերմաներեն Aktionsart բառը կամ այս բառի թարգմանությունն այս կամ այն լեզվով։

Ոմանք անջրպետում են այսպես կոչված aspect-ը՝ այս վերջին հատկանիշներից, ոչ մի կապ չգտնելով դրանց միջև և համարելով դրանք սկզբուն-

¹ E. Kurylowicz, L'apophonie en indoeuropéen, Wrocław, 1956, էջ 23։

քորեն հակառակ երևույթների: Այդ միտքն առաջին անգամ հայտնել է Գերման Յակոբզոնը²: Իրականում սրանք ոչ թե հակադրվում են իրար, այլ լրացնում և երբեմն էլ մեկը պայմանավորում է մյուսին:

Ինչպես կատարյալություն-անկատարություն, այնպես էլ մյուս հատկանիշները համարժեք հատկանիշներ են, որոնք ցույց են տալիս գործողության իրականացման ժամանակային վիճակները:

Այս երկու խումբ հատկանիշների ոչ թե հակադրության, այլ միասնության մեջ էլ կարելի է քննել կերպի և կերպա-ժամանակային փոխանցումների հարցը դասական գրաբարում (ի նկատի ունենք քերականական ժամանակը — Լ. 2.):

Կերպի վերաբերյալ հայ լեզվաբանության մեջ հաջողված է համարվում Աբեղյանի բնորոշումը: Իր «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ նա գրում է. «Բայի ժամանակներից անբաժան են բայի կերպերը, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսի հատկություն ունի գործողությունը մի որոշ ժամանակակետի՝ ներկայի, անցյալի կամ ապագայի նկատմամբ»³:

Աբեղյանը ընդունում է չորս կերպ: Կատարվող (գնում է, գնում էր...), կատարված (գնացել է, գնացել էր...), կատարելի (գնալու է, գնալու էր...) և պարզ կերպ (գնացի, կգնամ):

Հիմնականում ձիշտ տալով կերպի սահմանումը և նշելով նրա սերտ կապը բայի ժամանակների հետ, պրոֆ. Աբեղյանը, սակայն, հարցը ինչ-որ տեղ թողնում է թերի՝ կերպերը փաստորեն նույնացնելով բայական ժամանակների հետ: Մյուս կողմից, ըստ հեղինակի սահմանման, եթե իրոք կատարվող, կատարված և կատարելի կերպերը ցույց են տալիս գործողության հատկություն մի որևէ ժամանակակետի նկատմամբ, ապա պարզ կերպ անվանումը նման հատկություն չի նշում (թեև իմաստային տեսակետից այն նույնպես մատնանշում է կատարված գործողություն):

Սխալ պետք է համարել այն տեսակետը, ըստ որի կերպի արտահայտությունը անսլայման կապում են դերբայի հետ, իսկ ժամանակի արտահայտությունը՝ օժանդակ բայի հետ: Աբեղյանը, նրա հետևությանմբ նաև որոշ լեզվաբաններ, բայերի պարզ ժամանակները համարում են անկերպ: Նպատակ չունենալով անդրադառնալ արդի գրական լեզվում պարզ ժամանակների կերպային հատկանիշների հարցին, նշենք, որ գրաբարում նման բայերի մեջ առկա է կերպը, և մենք ուշադրություն կդարձնենք գրաբարի պարզ ժամանակների կերպային դրսևորմանը:

Գրաբարյան զնամ և արդի գրական լեզվի զնամ եմ ներկա ժամանակի բայերի արտահայտության ձևը տարբեր է, իսկ բովանդակության պլանում նրանք նույնանում են: Ինչ կերպային հատկանիշներ բնորոշ են զնամ անկատար դերբայով և եմ օժանդակ բայով կազմված բային, նույնը և բնորոշ է գրաբարի զնամ պարզ բային: Նման ձևով և այլ ժամանակների դեպքում:

Գրաբարի քերականները առհասարակ կերպի քերականական կարգին չեն անդրադառնում: Միսիթար Սեբաստացին բերում է բայի ութ հատկանիշ (սեռ, ձև, տեսակ, թիւ, դէմ, ժամանակ, եղանակ և լծորդութիւն), չնշելով կերպը:

Ոմանք էլ թեթևակիորեն նշում են միայն կերպային որոշ հատկանիշներ՝

² Տե՛ս նրա հոդվածը «Вопросы глагольного вида» ժողովածուի մեջ, Москва, 1962.

³ Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 225:

կապված բայի անցյալ անկատար կամ անցյալ կատարյալ ժամանակների հետ, իհարկե առանց խորանալու հարցի էություն մեջ:

Արսեն Բագրատունին, խոսելով բայի անցյալ ժամանակի մասին, գրում է. «Որ դանցելոյ իմեքէ խօսի, որ թէ չէ վճարեալ, ասի անկատար յոր դեռ գործն կայ յանցեալ ժամանակի. սիրէի: Բսկ թէ վճարեալ է, ասի՝ կատարեալ՝ յորում և գործն ավարտեալ է. սիրեցի»⁴:

Զամչյանի մոտ կարդում ենք. «Անկատար ժամանակն, կամ ըստ հնոց՝ յարածգական է, յորում բայն նշանակէ զառս և զկիրս արդէն սկսեալ, բայց դեռ ի ճանապարհի առ ի կատարիլ»⁵:

Գաբրիել Ավետիսյանը նույնպես նշում է անցյալ կատարյալի ավարտական, իսկ անկատարի ոչ ավարտական բնույթը. «Անցեալ ժամանակը երկու է, անցեալ անկատար, որ ներգործութիւնը կրցուցանէ առաջ գացած, բայց լմնցած չէ, ինչպէս գրէի, այսինքն կը գրէի կոր: Նւ անցեալ կատարեալ, որ ներգործութիւնը կրցուցանէ լմնցած, խալըսած: Ինչպէս գրեցի»⁶:

Ստ. Մալխասյանը «Գրաբարի համաձայնության» մեջ անցյալ կատարյալի համար բնորոշ է համարում վերջնական, չշարունակվող գործողությունը: Մնացած ժամանակների կերպային դրսևորումների, նրանց արտահայտման միջոցների ու կրած փոփոխությունների մասին խոսք չկա: Դասական գրաբարում համեմատաբար ավելի ցայտուն ձևով արտահայտվում է անկատարություն— կատարյալություն կերպային հակադրությունը՝ ներկայի և անցյալ կատարյալի հիմքերի վրա: Որպես անկատարության ձևաբանական արտահայտիչ հանդես է գալիս ներկայի հիմքը, իսկ կատարյալության համար՝ անցյալ կատարյալի հիմքը:

Անկատարություն-կատարյալությունը ակնառու կերպով երևում է համապատասխանաբար, հատկապես՝ ներկա, անցյալ անկատար մի կողմից և անցյալ կատարյալ ժամանակներում:

«Կախարդք, ասեմ, յղեն դեւս և հանեն զղեւս» (Եղն., 26): Այստեղ ընդգծված բայերը արտահայտում են այնպիսի գործողություն, որը սկսված ու կատարվում է, և ուշադրություն չի դարձվում գործողության ավարտի վրա:

Այլ է պատկերը հետևյալ հատվածում:

«Խաղաց զնաց Արշակ արքայ Հայոց Մեծաց. քաղաւորեաց յերկրին ասորեստանեայց հանդերձ հարբն իւրով և ամենայն ընտանեօքն իւրովք. եկն եհաս յերկրին Հայոց, և ժողովեաց զցրուեալս երկրին, և քաղաւորեաց ի վերայ նոցա» (Բուլ., էջ 102): Ընդգծված բայերը, դորձածված լինելով անցյալ ժամանակով, շունեն կերպային այն հատկանիշները, որոնք բնորոշ են առաջին նախադասության բայերին: Այստեղ ուշադրություն է դարձված գործողության ավարտի վրա:

Արդեն դասական շրջանից մթազնվում են բայերի կերպային արտահայտության ձևաբանական միջոցների իմաստները, որը և պատճառ է հանդիսացել այն հանգամանքին, որ գրաբարի թերականները չեն նշել կերպի կարգի գոյության մասին: Այդ միջոցներից կարելի է համարել (ինչպես երևում է վերը բերած օրինակներից) բայի ներկայի և անցյալ կատարյալի հիմքերի հա-

⁴ Ա. Բագրատունի, Հայերեն քերականություն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 131:

⁵ Մ. Զամչյան, Քերականություն հայկազեան լեզուի, Շուշի, 1859, էջ 235:

⁶ Գ. Ավետիսյան, Քերականություն հայկական, Վենետիկ, 1815, էջ 54:

կադրությունը: Առաջինը որպես անկատարություն, երկրորդը՝ կատարյալության արտահայտիչ: Այստեղից կհետևի, որ սահմանական եղանակի ներկա, անցյալ անկատար, ստորադասական եղանակի ապառնի ու հրամայական եղանակի արգելական ձևերը ենթադրում են անկատարություն, իսկ սահմանական եղանակի անցյալ կատարյալը, 2-րդ ապառնին, հրամայական եղանակի ներկան (բուն հրամայական) և ապառնին (հորդորական հրամայական) արտահայտում են կատարյալության զաղափար: Քանի որ ապառնի ժամանակը ինքնին կատարելի գործողություն է, ապա այս, ինչպես նաև հրամայական եղանակի ժամանակների դեպքում վերոհիշյալ կերպերը բնականաբար դիտվում են կատարելի գործողության մեջ:

Եթե ավելի խորամուխ լինենք, ապա կարելի է նկատել, որ ներկա-անցյալ կատարյալ հիմքերի հակադրության վրա, անկատարությունը և կատարյալությունը արտահայտվում են հետևյալ հակադրությամբ:

Անցանել, արկանել տիպի բայերի համար հակադրությունը կոնկրետանում է ան/0, աղալ, սիրել տիպի համար՝ 0/ց, երկնչիմ, կորնչիմ խմբում՝ նչ/ի, քոչիմ, վիսչիմ բայերի համար՝ չ/ի և այտնուլ, զարքնուլ խմբի համար ն/ի հերթագայությամբ: Վերջին երեք տիպերը, այսպես կոչված ի թույլ բաղադրիչով բայերն են:

Բառնալ, դառնալ բայերի համար հերթագայությունը ն/ծ-ն է (իսկ եթե վերցնենք սրանց վերականգնված ձևերը՝ բարձնալ, դարձնալ, կլինի ն/0: Բ—Բ-ն հակադրության մեջ չենք մտցնում որպես հնչյունի փափկացում և կոշտացում, ինչպես նաև կերպային ցուցիչ չենք հաշվում երկրորդ ապառնու ս-ն (սիրեսցուք, հեռացուք), որովհետև այն անցյալ կատարյալի ց-ն է, որը տարնմանության օրենքով դարձել է ս:

Ինչպես հայտնի է, «ու» խոնարհման բայերի անցյալ կատարյալի հիմքը հիմնականում անցոյական է: Այս խմբի ածանցավոր բայերի համար հակադրությունը կազմում է ածանց/0 հերթագայությունը: Օրինակ՝ զբօսնուլ—զբօս (ն/0), ջեռնուլ—ջեռ (ն/0) և այլն: Ընկենուլ, ընքեռնուլ, լնուլ, խնուլ, յենուլ բայերի համար ն/ց կամ են/ց-ն:

Հարցը մի քիչ դժվարանում է, երբ դիտում ենք այս խոնարհման պարզ բայերը՝ զելուլ, քուլուլ, զենուլ և այլն: Այս խմբին կարող ենք միացնել «ե» խոնարհման այն բայերը, որոնց անցյալ կատարյալի հիմքը արմատական է: Դրանք են ածեմ, բեբեմ, հալեմ, հեղուսեմ: Որո՞նք են այս բայերի հերթագայվող անդամները: Եթե դրանք համարենք համապատասխան ներկայի և անցյալ կատարյալի վերջավորությունները, ապա խախտած կլինենք ընդհանուր սկզբունքը: Եթե հաշվի առնենք իմաստային կողմը (խոսքը միայն անկատարություն-կատարյալության մասին է), ապա այստեղ դարձյալ սկզբունքի խախտում թույլ կտանք՝ մի մակարդակից անցնելով մյուս մակարդակին:

Նայենք այս խմբի որևէ բայի խոնարհման հարացույցը, ներկա և անցյալ կատարյալ ժամանակների համար եզակի թվում:

Բերեմ՝

ներկա

անց. կատարյալ

բերեմ

բերի

բերես

բերեր

բերէ

բեր (եբեր)

նշված այս և նման բայերի կերպային հակադրությունը ավելի կոնկրետ է դառնում 3-րդ դեմքում՝ 0/և հերթագայությունը, կամ 0/է՝ ձայնավորով սկսվող բայերի դեպքում:

Աձականը գործուն է եղել հնդեվրոպական շատ լեզուներում, գրաբարում պահպանվելով միայն միավանկ հիմքերում: Իսկ վերը նշված բայերի մեծ մասի անցյալի հիմքը միավանկ է, թեև ամենայն հավանականությամբ ինչ-որ շրջանում աճական ունեին նաև բազմավանկ բայերը: Բայց այդ ապացույցներն արդեն պատմա-համեմատական լեզվաբանության խնդիրն է:

Մնում է քննել բայերի մի խումբ, այսպես կոչված, անկանոն բայերը: Անկանոնությունը արտահայտվում է բայերի տարահիմքությամբ: Այդ տարահիմք (երբեմն նաև տարարմատ) հակադրությամբ էլ արտահայտվում է կերպային հակադրությունը: Լսեմ-լուալ, դնեմ-եղի, գամ-եկի, ուտեմ-կերալ և այլն:

Ներկայի և կատարյալի հիմքերից կազմված ժամանակաձևերում հանդես է գալիս նաև տեական և ոչ տեական կերպը: Ընդ որում, եթե առաջին և երկրորդ ապառնիսների հարցում անկատարությունը և կատարյալությունը ընդունում ենք որոշ վերապահությամբ, ապա տեական և ոչ տեական կերպերը հանդիսանում են նաև այդ ժամանակների տարբերակիչ հատկանիշներ:

Բայի հարցերով զբաղվող շատ լեզվաբաններ (Գ. Ղափանցյան, Աշ. Աբրահամյան, Ա. Ղարիբյան, Հ. Բարսեղյան և այլք) ենթադրում են, որ գրաբարում տեականության ձևաբանական արտահայտիչ է եղել ան(են) ածանցը: Ինքնին այդ հանգամանքի օգտին է խոսում այն փաստը, որ ան-ը հանդես է գալիս միայն ներկայի հիմքից կազմված ժամանակաձևերում (տեսանեմ, տեսանելի, տեսանիցեմ):

Բացի դրանից, գրաբարում մի շարք ածանցավոր բայերի կողքին՝ ցանկանամ, անձկանամ, զատանեմ, սպանանեմ... գործածվում են նաև այդ բայերի ոչ ածանցավոր ձևերը: Ենթադրվում է, որ բայերի այդպիսի զուգահեռ գործածությունը աննպատակ չէր կարող լինել: Ամենայն հավանականությամբ տեականությունը ավելի ընդգծված ձևով հանդես է եկել ածանցավոր ձևերի մեջ:

Արդյո՞ք դասական մատենագրությունը ածանցավոր և ոչ ածանցավոր ձևերը տարբերակում է որպես կերպային առանձնահատկություններ: Ճիշտ է, մենք հանդիպում ենք և՛ այս, և՛ այն ձևերին, բայց թվում է, թե դասական շրջանից արդեն հեղինակը կամ թարգմանիչը չի դիտել այն որպես կերպային տարբերակներ, այլ օգտագործել է որպես համարժեք ձևեր: Հաճախ կարելի է հանդիպել հենց միևնույն նախադասության մեջ հանդես եկող երկու ձևերին էլ, ինչպես. «Առեալ դանձնիշխանություն ում կամի ծառայանալ, որ մեծ շնորհն պարգևեալ է նմա յԱստուծոյ. քանզի այլն ամենայն ի հարկէ ծառայէ աստուածական հրամանին» (հղն., 40):

«Անձն ամպարշտի ցանկաճալ շարեաց և ոչ գտցէ» (Առակք. ԻԱ—10)⁷:

«Ամպարիշտ ցանկալ դամենայն աուրս զցանկութիւն շարեաց» (նույն տեղում): Նման օրինակները շատ են, որտեղ, սակայն, չի զգացվում, որ տեականությունը արտահայտելու համար հեղինակը օգտագործել է ածանցավոր ձևը:

⁷ Աստվածաշնչից վերցված այս և հետագա օրինակները քաղված են Վենետիկի 1860 թ. հրատարակությունից:

Ուստի կարելի է եզրակացնել, որ դասական շրջանից արդեն աճ-ը դադարել էր կերպային արժեք ունենալուց, որը ամենայն հավանականությամբ գործուն է եղել ավելի վաղ շրջանում:

Գաբրիել Ավետիքյանը իր աշխատության «Տեսակք բայից» գլխում «ան» ածանցին վերագրում է բոլորովին այլ հատկանիշ. «Բային տեսակը անուան պէս երկուք է, այսինքն նախատիպ և ածանցեալ եւ ածանցումը իրեք կերպով կրլլայ: Նախ երբոր ածանցեալ անուանէ կրճեանայ: Երկրորդ՝ երբոր նախատիպ բային մէջ աննշան մասնիկ կամ դիր մը կըմտնէ, որ նշանակութիւնը կըսաստկացնէ կամ միայն կանուշցնէ բայը: Կըսաստկացնեն՝ ատ, ոտ, տ մասնիկը, որպէս եւ անուանց, զոր խածեմ-խածատեմ, կտրեմ-կտրատեմ, խոցեմ-խոցոտեմ, պատռեմ-պատառոտեմ, բեկեմ-բեկտեմ, քակեմ-քակտեմ (դիտավորյալ բերում ենք բոլոր օրինակները, որովհետեւ հետո ուշադրութիւն կդարձնենք այս հարցի վրա): Իսկ անուշցնող մասնիկ է աճ-ը (ընդգծումը մերն է— Լ. Հ.), որ նշանակութիւնը չի փոխեր, զոր բեկեմ-բեկանեմ, անիծեմ-անիծանեմ, մտեմ-մտանեմ, օծեմ-օծանեմ և այլն»⁸: Նույն տեղում Ավետիքյանը բերում է Մագիստրոսի վկայութիւնը, որը այդ ձևերը դիտում էր որպէս ռամկական և աղնվական ոճերի տարբերութիւն: Իրոք, հավանական է, որ արդեն V դարից պարզ ձևերը ավելի շատ բնորոշ էին ժողովրդական-խոսակցական, իսկ ածանցավորները՝ գրի լեզվին:

Տեական-շարունակական կերպը գրաբարում արտահայտվում է նաև բառային միջոցներով. «Վաղ հասիր, դեռ ղամուսինն իմ զուր և առանց վնասու և հանցանաց խողխողեն» (Բուղ., 184): «Աճապարեա եկ, դի տակաւին աւասիկ վնասս մեծամեծս առնեն: Իբրև բազմեցան և դեռ ուտէին» (Զալխ., 367): «Դեռ իմն զգործ մշակութեան աստուծոյ գործէր» (Բուղ., 48): Այստեղ դեռ, տակաւին բառերը արտահայտում են գործողութիւն տեականութիւնը, նրա շարունակական բնույթը:

Տեականութիւնը երբեմն արտահայտվում է նաև «կամ» բայի միջոցով: Այս դեպքում բայը դրվում է անցյալ անկատարով՝ հարակցելով անցյալ դերբային (վերջինս մատնանշում է գործողութիւնը):

«Մինչդեռ կայր նա կախեալ: Եւ կայր նա կախեալ աւուրս եւթն» (Ագաթ., 65):

Տեականութիւն արտահայտման այս ձևը կարելի է հաշվել քերականական միջոց, որովհետեւ այս բառերը ինքնին զուրկ են բառային իմաստից և տվյալ դեպքում ունեն միայն քերականական իմաստ, ի հակադրութիւն կերպի այն արտահայտութեան, երբ այն դրսևորվում է բառային իմաստի մեջ: Օրինակ՝ կամ զջուր, որ հանապաղ ըմպեմք: Եղնիկից քաղված այս նախադասութեան մեջ տեականութիւնը արտահայտվում է հանապաղ բառի միջոցով, բայց այդ հենց իր բառային իմաստն է: Ուստի կերպի այս արտահայտութիւնը տարբերվում է նախորդից, թեև այն նույնպէս ենթադրում է տեականութիւն: Կերպի մյուս արտահայտութիւնը գրաբարում ընդհատութիւնն ու անընդհատութիւնն է: Ընդհատութիւնը հանդես է գալիս աւտ, ուտ, տ մասնիկ ունեցող բայերի մոտ, որոնց թիվը, ինչպէս գիտենք, գրաբարում շատ սահմանափակ է: Այդ երկու կերպերի հակադրութիւնը արտահայտվում է աւտ (կամ ոտ, տ)/0 հերթագայութեամբ:

⁸ Գ. Ավետիքյան, նշվ. աշխ., էջ 282—283:

Արդի հայերենում այդ ածանցները ընդունված է անվանել բաղմապատկական ածանցներ: Լ. Բարսեղյանը բայի մասին իր արժեքավոր աշխատության մեջ գրում է. «Հայերենի քիչ թե շատ ճանաչելի կերպը, որը համապատասխան ձևով ձևաբանական արտահայտությամբ երևան է գալիս որոշ թվով բայերի մեջ, բաղմապատկական կամ կրկնողական կերպն է: Այս կերպի բայերը արտահայտում են բաղմապատիկ կամ կրկնվող գործողություն»⁹:

Եթե հարմար է այդ բայերի բաղմապատիկ անվանումը, ապա այն չի կարելի կերպ կոչել, որովհետև բաղմապատիկը սոսկ գործողության ձև է, որը չի առնչվում ո՛չ առարկայական, ո՛չ էլ քերականական ժամանակների հետ, իսկ կերպի բնորոշ հատկանիշներից մեկը նրա սերտ կապն է ժամանակի հետ:

Թվում է, թե ճիշտ չէ վերը նշված բայերը անվանել կրկնվող գործողություն ցույց տվող կամ կրկնողական կերպի բայեր: Այս տիպի բայերի մոտ կրկնվող կերպ կամ գործողություն չկա: Ինչպես վաղելը քայլելու կրկնությունը չէ, այնպես էլ կտրտել չի նշանակում կրկնել կտրելու գործողությունը: Ժամանակային առանցքի վրա կարելի է կրկնել և՛ կտրելու և՛ կտրտելու և՛ կցելու և՛ կցկցելու գործողությունը:

Դասական շրջանում ընդհատությունը ավելի հաճախ արտահայտվում է բառային միջոցներով՝ կապված բառիմաստի հետ: Բոլոր միջոցները նշելը այստեղ աննպատակ է. նշենք միայն, որ ամենատարածված եղանակը մակբայների կրկնությամբ արտահայտվող ընդհատությունն է: Ինչպես՝ «Զիարդ պաշտիցեմք զարեգակն, որ մերք կոչի իբրև զծառայ առ ի սպասն յոր կարգեցաւ հասանելոյ և մերք երթայ զօղէ իբրև զարհուրեալ և տայ տեղի խաւարին լնուլ զմիջոց ի մեծի տանս» (Եզն., 14): «Կամ զօղ որ մերք գոչիցէ վարազացեալ հրամանաւ և մերք սարսէ ի գոչելոյն սաստիւ» (Եզն., 15):

Կան լեզուներ, որոնց բնորոշ է այսպես կոչված ինգրեսիվ կամ սկսնական կերպը: Ռուսերենում նշված կերպը ունի իր ձևաբանական ցուցիչը: Ուշագրավ է այն փաստը, որ այդ միջոցը շունեցող այլ լեզուներ ռուսերենի նշված կերպը ներկայացնում են բառային ճանապարհով: Այսպես, Մ. Շոլոխովի «Խաղաղ Դոնից» к вечеру посыпалась изморозь նախադասությունը, որտեղ ընդգծված բայը սկսնական կերպ է արտահայտում, ֆրանսերեն թարգմանության մեջ արտահայտվել է հետևյալ ձևով՝ Vers le soir une bruin froid se mit a tomber¹⁰ (ընդգծումը մերն է — Լ. Տ.):

«По- նախածանցով արտահայտված սկսնական կերպը ֆրանսերենում արտահայտվել է se mit բառով, որը համապատասխանում է արդի հայ գրական լեզվի սկսեց (գրաբ. սկսաւ) բառին: Եթե համեմատելու լինենք գրաբարը (ինչպես նաև աշխարհաբարը) ուրիշ լեզուների հետ, որոնք ունեն սկսայնության ձևաբանական արտահայտիչ, ապա կարելի է բառային ճանապարհով ներկայացնել այդ կերպը, իսկ երբ քննում ենք գրաբարն «ինքն իր մեջ», տեսնում ենք, որ սկսնական կերպը բնորոշ չէ գրաբարին կամ, ավելի ճիշտ, այն չունի իր ձևաբանական արտահայտությունը¹¹:

⁹ Լ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, էջ 133:

¹⁰ Т. Б. Вьюгова, Способы передачи значения совершенного вида русских глаголов средствами французского языка. Тула, 1968.

¹¹ Սկսայնությանը հակադրվում է ավարտայնությունը, որը ենթադրում է անցյալ կատարյալ ժամանակը: Այդ ժամանակի համար սկսայնությունը ետին պլան է մղվում:

Այսպիսով, դասական գրաբարի բնորոշ կերպերն են անկատարություն-կատարյալությունը, տեականություն-ոչ տեականությունը: Մրանք սերտորեն կապված են քերականական ժամանակների հետ և երբեմն էլ հանդիսանում են նրանց տարբերակող հատկանիշներից մեկը:

Խոսելով գրաբարի այս կամ այն քերականական ժամանակին բնորոշ կերպերի մասին՝ անպայման պետք է նշել, որ դա իրականանում է միայն այն դեպքում, երբ ժամանակները հանդես են գալիս իրենց բուն կիրառությամբ: Իսկ երբ այս կամ այն քերականական ժամանակը հանդես է գալիս մի այլ ժամանակի իմաստով, այդ դեպքում ստանում է կերպային նոր դրսևորում: Իսկ ժամանակների այդ փոխանցումները արդեն դասական շրջանից զգալիորեն տարածված էին:

Օրինակ՝ «Այլ զի Աստուած մահուան չէ պատճառ, վկայեսցէ ամենաարուեստ իմաստունն, որ ասէ» (Եզն., 75): «Եթէ դարձցիս և խոնարհեցուցես զանձն քո առաջի տեառն հեռի արարեր ի յարկէ քումմէ զանիրաւութիւն» (Յովբ., Իբ 23):

Առաջին նախադասության մեջ երկրորդ ապառնիով դրված բայը հանդես է գալիս ներկա ժամանակի իմաստով, իսկ երկրորդում՝ անցյալ կատարյալով դրված բայը (արարեր) բանում է ապառնու իմաստով:

Կարելի է նման բազմաթիվ օրինակներ բերել: Նշված և նման այլ օրինակներում այս կամ այն ժամանակաձևով արտահայտված բայերի բնորոշ կերպային հատկանիշները անհետանում են, և բայերը ստանում են նոր կերպային հատկանիշներ՝ բնորոշ այն քերականական ժամանակին, որի իմաստով հանդես է գալիս այս կամ այն ժամանակաձևը:

Այստեղից կարելի է եզրակացնել նաև, որ կերպերը ոչ միայն ձևաբանական, այլև իմաստային-գործառական կարգեր են:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագաթ.— Ագաթանգեղոս, Պատմութիւն, Վենետիկ, 1862:

Բուզ.— Փաւստոսի Բիւզանդացոյ պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:

Եզն.— Եզնկայ վարդապետի Կողբացոյ Նղծ աղանդոց հեթանոսացն, Վենետիկ, 1826:

Չալիս.— Չալիսեան, Քերականութիւն հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1852:

К ВОПРОСУ О ГЛАГОЛЬНОМ ВИДЕ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

Л. Ш. ОГАНЕСЯН

(Р е з ю м е)

В классическом периоде древнеармянского языка различаются следующие видовые пары: совершенность—несовершенство, длительность—недлительность, прерывность—непрерывность.

В первых двух парах видовые признаки осуществляются противопоставлением основ настоящего времени и аориста, а в последней паре—присутствием или отсутствием суффиксов *աւ*, *աւ*, *աւ* (*խոսցաւ*—*խոսցաւ*, *բնկաւ*—*բնկաւ* и т. д.).

В глаголах типа *սպասեալ*—*սպասեալեալ* суффикс *աւ* (*եաւ*) уже в классическом периоде древнеармянского языка не является видовым показателем.

Вышеотмеченные виды могут выражаться и лексическими средствами.